Գնէստր գետի մօտ **) գլխաւոր աշխատութիւնները դանդաղեցնում, բայց քաղաքում սկսել են խողովակներ դարսել, և այն էլ փոքրացնելով խողովակների դիամէտրը ի վնաս ջրի հոսանքին, ուստի և ջրանցքի երկարատևութեանը,—բայց նրա համար միայն, որ սկզբնական ծախսերը փոքր լինեն,—այդպէս են անում բոլոր կօնցէսսիա վերցնողները․ Իսկ երկու բաքերը՝ մինը քաղաքում, միւսը Գնէստրի մօտ և մեքենաների համար շինութիւնը սկսած չեն դեռ ևս․ Երևում է որ շինում են ոչ թէ ամենահարկաւորը, այլ այն, որ աւելի հասարակութեան աչքերին է ընկնում․

Իսկ առ այժմ մենք վատ ջրի համար աւելի թանգ ենք վճարում, քան թէ շատ տեղերում լաւ գինու համար․

Ինչ որ վերաբերում է Թիֆլիսի ջրանցքին, կարծեմ, որ աւելի ապահով կը լինէր յանձնել նրան մի ուրիշ ընկերութեան, որ աւելի երաշխաւորութիւն կը ներկայացնէ և նրան յայտնած լինէր մի բանով․

Սակայն ես խորհուրդ կը տայի բոլորովին չը յանձնել ձեր ջրանցքը կօնցէսսիայով, այլ թող քաղաքը ինքն վերցնի իր հաշվով և գտնի մի անձին որ ձեռնարկութիւնը յանձն առնէ գլուխ բերել յայտնի գումարով, մշակված պրօէկտի հիման վրա․

Այդ տնտեսական սկիզբը այժմ ճանաչված է ամբողջ Եւրօպայում, այնպէս որ քաղաքներից շատերը յայտնի գումարով կրկին յետ են առնում իրանց ջրանցքի կօնցէսսիան․

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք լսում ենք, որ փետրվարի 22-ին արվեստագործական ուսումնարանին վերաբերեալ կանօնադրութիւնը վերաքննելու համար Քաղաքային Վարչութենից ընտրած մասնաժողովը ունեցել է իր առաջին նիստը․ Վերջապէս․․․․ Ասում են, թէ տեխնիկական ընկերութեան ծրագիրը միանգամայն փոխվելու է․

Մենք յիշեցնում ենք մեր ընթերցողին «Մշակ» լրագրի 6-որդ համարի առաջնորդող յօդվածը, և ապա հետևեալ հարցն ենք առաջարկում՝ մինթէ յիշեալ մասնաժողովը նոյնպէս գաղտնի կը պահէ տեխնիկական ընկերութեան պրօէկտը և իր նստերին չի հրաւիրի տեղային ռուս, հայոց և վրաց լրագրութեան ներկայացուցիչներին, կամ չի տայ մեզ պրօէկտի պատճէնը, որ մենք ծանօթացնենք նրա հետ հասարակական կարծիքը․․․

⁂

Ալէքսանդրապօլից գրում են մեզ, որ փետրվարի 15-ին տեղոյս Մայր եկեղեցում կատարվեցաւ վարդանանց նահատակութեան տօնը, որին կից իշխան Գ. Արղութեանցի և շուշեցի Պօղոս Գասպարեան Ալէքսանեանցի հոգեհանգիստը տօնուեց․ Մի և նոյն օրը երեկոյեան տեղիս երիտասարդների խումբը յաջողութեամբ ներկայացրեց ազնուականաց ժողովարանում «Սանատրուկ և Սանդուխտ» ողբերգութիւն բարեգործական նպատակով, որ ծախսը հանելով՝ մօտ 250 մանէթ է ժողովել․ Տիկին Զարուհի Գուլումեանցն մեծ և խոր տպաւորութիւն ունեցաւ հանդիսականների վրա Սանդուխտի դերի մէջ․ Պ. Գաւառապետը ոչ թէ միայն թոյլ տուեց ներկայացումն, այլ և 10 ռուբլի ընծայեց յօգուտ բեմին․

⁂

Մեզ գրում են Ալէքսանդրապօլից որ պ. Բէգ-Նազարեանցը տեղիս Թեմական դըպրոցի կանօնադրութիւնը մշակելուց յետոյ, այժմ ներկայացրել է Հոգաբարձութեանը, որ ուսումնական յանձնաժողովի քննութեան ենթարկվի․ Յոյս կայ, որ շուտով կուղարկուի Վեհափառին ի հաստատութիւն․

⁂

Ընթերցողը յիշում է, որ դօկտօր Գրիգոր Արծրունու ներկայացվեցաւ գիւղատնտեսական ընկերութեանը մի պրօէկտ հայ-վրաց գիւղական լրագրի․ Այժմ ընկերութեան խորհուրդը, ասում են ցաւելով յայտնել է, որ դրամական միջոցների պակասութեան պատճառով անկարող է իրագործել պ. Գրիգոր Արծրունու առաջարկութիւնը, բայց ըստ սկզբին համակրում է այդ գաղափարին․ Մի և նոյն ժամանակ լսում ենք որ, վրաց գիւղական լրագիրը զրկվեցաւ օժանդակութենից և ընկերութիւնը հիմնում է իր սեփական գիւղատնտեսական լրագիր,—բայց միայն վրաց լեզվով․․․ Իսկ հայոց լեզվով, սիրելի ընթերցող, մնում է «Մշակի» խմբագրութեանը կարելին չափ լրացնել, մինչև որ մասնաւոր օժնով կը հիմնվի մի հայոց գիւղատնտեսական թերթ․

⁂

Վրաց «Դրօէբա» լրագիրը հաղորդում է, որ անցեալ տարվայ երաշտութեան պատճառով Սղնախում այժմ սաստիկ սով է․ Կամենում են գժբաղդների համար ստորագրութիւն բաց անել․

⁂

Ուրախ ենք, որ առիթ ունենք յայտնելու, թէ պ. Շահվերդեանը, որի մանկավարժական յօդուածը ծանօթ է „Մշակի" ընթերցողներին, նշանակվեցաւ վարժապետ Ներսիսեան դպրոցի պատրաստական դասատան մէջ․

⁂

Փետրվարի 25-ին, կիւրակի օրը գումարվեցաւ Թիֆլիսի փօխադարձ կրէդիտի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը․—Մանրամասնը ուրիշ անգամ․

⁂

Մեզ գրում են Շամախուց՝ փետրվարի 10-ին Շամախու շրջակայքում սաստիկ ձիւնախառն հողմից մի մարդ և երկու կին իրանց երեք կովերով և երեք եզներով սառել են․

⁂

Փետրվարի 14 և 16 Շամախու ռուս ծառայողները ներկայացրին Գօգօլի «Ամուսնութիւն» (Женитьба), «Փափկասուն սրտի ձախորդութիւն» (Бѣда отъ нѣжнаго сердца) կօմէդիաներ և քանի մի վօդէվիլներ․—Ցանկալի կը լինէր որ և հայերը հետևէին այդ գովելի օրինակին և իրանց լեզվով ներկայացնէին․

⁂

Մեր լրագրին գրում է Բագուից պ. Աւագ Գրիգորեանցը՝

Մարդասիրական ընկերութեան խորհրդի նախագահի և անդամոց յունվարի 25-ին եղած ընտրութիւնը հաստատապէս չեղաւ․ Այս առթիւ խորհուրդ կազմվեցաւ, որ լինի փետրվար ամսի 11-ին․ Այդ օրը հաւաքվել էին Մարդասիրական ընկերութեան ուսումնարանի դահլիճը թէ հիմնադիր, թէ անփոփոխ և թէ տարեկան անդամներից ընդ ամենը 45 հոգի, հաշւատեսութիւն արին և շնորհակալութիւն յայտնեցին նախագահին և անդամներին, որոնք երեք տարվայ ընթացքում աշխատել են այդ գործի մէջ՝ կառուցանելով ուսումնարանները տղաների և օրիորդների, տպարանը և մատենադարանը և հոգացին անդամների թիւը շատացնելու մասին․ Հաշւատեսութենից յետոյ ձայնախօսութիւն արին նոյն ընկերութեան ատենապետի և անդամ Սէրգէյ Վարշամեանցը և Յովհաննէս Միրզաբէգեանցը․ Ընտրվեցաւ նախագահ խորհրդոյ՝ Պաւել Շամիլէ Մելիք-Բէգլարեանց (որ և է նախագահ բէգական կօմիտէի), անդամք՝ Ն. Կրասիլնիկեանց, Գրիգոր Թումայեանց, Յակովբ Աւրէլեանց, Խաչատուր Քանանեանց, Սերգէյ Վարշամեանց, Գրիգոր Գիլասարեանց, Գրիգոր Այվազեանց և Աւագ Ծատուրեանց․ Ցանկանում ենք և սոցա յառաջ տանել աջողութեամբ ընկերութեան գործերը․

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՍՊԱՆԻԱ

Կրկին հին պատմութիւնն է սկսվում, կրկին քաղաքական բեմի վրա առաջին դեր խաղացող հանդիսանում է Իսպանիան․ կրկին զրկվում է գահից և աքսորվում է թագաւորը ու հրատարակվում է հանրապետութիւնը,—բայց արդեօք երկար ժամանակով: Միշտ ամենքից մոռացած, Իսպանիան այս րօպէիս ներկայացնում է ամենահետաքրքիր օրվայ խնդիրը, ամենքը նրանով են պարապած,—բայց գուցէ անցաւոր հետաքրքրութեան վերջը այն կը լինի, որ քանի մի ժամանակից յետոյ, դարձեալ կը մոռանան անգամ նրա գոյութեան մասին:

Այդպէս է այդ երկրի վիճակը, կարծես նա երբէք չը պիտի ազատվի այդ կախարդական շրջանակից, որի մէջ նա ինքն իրան գերի է բանել՝ յեղափոխութիւնը յարուցանում է մի հակա—յեղափոխութիւն, փոխվում են մինիստրութիւնները, տէրութիւնները բռնում են նախընթաց տէրութիւնների տեղը, որ երբ իրանց հերթը անցնէ, դարձեալ իջնեն ասպարիզից ու հետևեալին տեղ տան․․․

1868 թւին աքսորվեցաւ Իզաբելլա թագուհին: Կազմվեցաւ մի ժամանակաւոր տէրութիւն, գումարվեցաւ Ազգային ժողովը (կօրտէսներ), սկսվեցան անվերջանալի վիճաբանութիւններ թէ ինչ քաղաքական ձև պիտի ընդունի պետութիւնը՝ հանրապետական կամ միապետական, և եթէ միապետական լինի, ո՞ւմ հրաւիրել թագաւորութիւն անել: Ցանկացողներ շատ կային և իւրաքանչիւրը իր կուսակիցներ ունէր: Ֆրանսիան և Պրուսիան մինչև անգամ նրանցից մէկի համար կռւեցան, կամ գոնէ սկզբում ձևացնում էին, որ նա էր պատերազմի առիթ տուողը:

Երկու տարվայ ընթացքում Կօրտէսները մտածում էին այդ հարցի վրա և վերջապէս վճռեցին՝ հրաւիրել Իսպանիայի գահը Իտալիայի Վիկտոր-Էմանուէլ թագաւորի որդուն Ամէդէյին: Դեկտեմբերի 30-ին 1870 թ. Ամէդէյ ոտքը կոխեց Իսպանիայի հողի վրա,—և դարձաւ Իսպանիայի թագաւոր: Բայց նրա առաջին քայլերը այդ նոր ասպարիզում, հանդիպեցան անյաղթելի արգելքներին: Նրա դէմ էր կաթօլիկ-մօլեռանդ հոգևորականութիւնը, չը կարողանալով նրան ներել, որ նա Իտալիայի թագաւորի որդին է, այն մարդու, որ զրկեց պապին աշխարհական իշխանութիւնից, բոլոր երկիրներից և վերջը սեփականացրեց իրան Հռօմ քաղաքը և սուրբ հօրը դրեց բանտ Վատիկան պալատի մէջ: Նրա դէմ էին այն ամենքը, որք իրանց վիրաւորված էին համարում, տեսնելով գահի վրա ոչ թէ մի իսպանացուն այլ մի օտարազգին, մի իտալացուն,—կարծես թէ Իսպանիան մի և նոյն դրութեան մէջ չէր լինի, եթէ գահի վրա մի իսպանացի լինէր, կարծես թէ ֆրանսիացիք շատ բաղդաւոր էին, որ Նապօլէօնը ֆրանսիացի էր: Նրա դէմ էին հանրապետականները, որք նրան չէին կամենում ոչ իտալացի լինելու, կամ իսպանացի չը լինելու պատճառով, այլ նրա համար միայն, որ նա թագաւոր էր,—„Մեզ ոչ մի թագաւոր հարկաւոր չէ,“ ասում էին նոքա: Նրա դէմ էին այն ամենքը, որք իրանց կանդիդատներ ունէին: Մինչև որ աստիճան զարգացած էին զանազան կուսակցութիւնները, նրանից է երևում, որ նրանց թիւը հասնում էր 15-ի, իսկ որ աստիճանի զօրեղ էր նրանց ընդիմադրութիւնը թագաւորի վերաբերութեամբ,—երևում է հետևեալ դէպքից՝ նորերումս թագուհին երեխայ է բերել, բայց ահագին դժուարութիւնով կարողացան

**) Այդ անդից և պէտք է անցկացնեն ջուրը քաղաքի մէջ․

Խմբ.

ցէք, ծափահարեցէք, ու շռայլեցէք մէկ մէկու. բայց վերջը՝ աղքատ մնացէք․․․

♂

Աղքատ կը մնայինք, եթէ այժմեան տեղական պարբերական թերթերը չը հարստացնէին մեզ—իրանց ընդհանուր նպատակից շեղված նիւթերովը․

Վրաց Օրագրութեան մասին բան չեմ ասի, որովհետև, ոչ նրանց ապ-ժէ-ճէ-ռան գիտեմ, ոչ բանի-մին-սիմը․ Բոլոր իմացածս միայն էն է, որ ամէն մի դէպքում, երբ իմ սիրական ազգի վերաբերութեամբ յօդուածներ են տպում, պէտք է խոստովանած. որ էդ գրուածներից, հայութեան քթի համար անախորժ հոտ չէ փչում․․․․ իսկ ինչ որ վերաբերում է ռուս պարբերական թերթերին, օ՜օ՜․․․ ես սիրահարուած եմ դրանց բազմակողմանի և հարուստ—յայտարարութիւնների վերայ․․․ Քու դուշմանը, ինչ կը լինէր մեր հասարակութեան հալը, եթէ էդ թերթերը, իրանց էջերը չը լցնէին—ծախուող տների, վարձու տաքու հիւրանոցների, մագազինների, հաւանի ցիգարների, դիպլօմաւոր ձիաների (лошадь получившая хороший атестатъ) տանիցը փախած, կամ տիրոջը կորցրած պուդելների, (արիստօկրատ շների) ատամնէտի դմակների, աչքերին գետին փռող որսորդական հրացանների, իրանց երկրում սափրիչութիւն, իսկ մեր երկրում մանկավարժութեամբ պարապող Ֆրանսիացիների, demi-monde-ի գերդաստանում զարգացած գուվերնանտկաների, տանը տեղից դուրս արած, բայց էլի նոր տեղ պտռող խնդրել ծառայից—յայտարարութիւններին․․․

կան և ուրիշ տեսակ յայտարարութիւններ, որք են․ Գիշերօթիկ դպրոցների,—որտեղ ոչ ոք բան չէ սովորում, բժշկատան (լէչէբնիցա սաւածի)—ուր շատ քիչն են առողջանում, ռուսաց թատրօնի,—որտեղ չեն մարդ գալի. փոխատու ընկերութեան,—որ ամենքի համար չէ մերձենալի․․․

♂

—Էլ ուրիշ բան կայ թէ չէ․

—Կայ, ինչպէս չէ․ Միայն մէկ հարցի վերաբերութեամբ «քառասուն հատ առաջնորդող յօդուած գրվեցաւ» երևի այն նպատակաւ, որ հասարակութիւնը, քառասուն հատ եգիպտոսեան բուրգեր կանգնեցնի ի փառս և ի պարծանս յիշեալ լրագրի renomcé-ին․․․․ Նորերումս լսեցի, թէ էդ բուրգերի համար, ստորագրութիւն է բաց եղել „Голосъ" լրագրի խմբագրատնում, իսկ շինուածքի պարագայքն էլ (մասալէքը) մեր քաղաքի մէջը յարմար և վայելուչ տեղ չը լինելու պատճառաւ, պէտք է հաւաքուի—Բուխարիայի անապատում․․․

♂

—Իսկ հայ օրագրութիւնը․․․

—Հայ օրագրութեան մասին բան չեմ ասի․ Նա „դեռ չէ մտել այն աւազան, որ ձեռին բռնել տանք զուռնան" թէև, ճշմարիտը ասած, զուռնաչի կարօտութիւն ունի․ Բան է, եթէ ռուսահայոց գրականութիւնը, չափազանց հարստանայ կենդանի հարցերի չափազանց աղքատութեամբ, էգպիսի հարկաւոր ցէպքերում, աղքատ պէտք թող զուռնաչին ձեռին դռնէ դուռը ման գայ, ու մուրացկանութիւն անէ․․․․

Թող հետևի Պօլսու, մեր հայ եղբարց օրինակին․ Նրանք ի սկզբանէ անտի հէնց մի գլուխ մուրացկանութիւն են անում․ Բայց ամենից, ի հարկէ, մեզնից ոչինչ չէին խնդրի, որովհետև մենք ոչինչ չունենք տալու․ կարծիք չը կայ, որ—Եւրոպացիներից․ Էֆէնդի Այրին՝ դուր եկաւ Դիւման,—խելոյն թարգմանեց. Էֆէնդի Բեննին էլ Հիւգօն—խելոյն հրատարակեց․ Մի ուրիշ Էֆէնդու էլ Թիերի ճառերը—ամբողջապէս տպեց․․․ Մի բան միայն դուր չեկաւ այրից սկսած, մինչև այբ-ծա-աստուած, ինի-մին-իմ—էֆէնդիներին, որ հայութեան պահանջմունքին յարմար, ինքնուրոյն, մտաւոր արդիւնաբերութեանը ձեռնամուխ չեղան․ Երևի այն պատճառաւ, որ ձեռները չը հասաւ․․․․ Շատ բարի․ Գոնեա թարգմանութիւնների մէջ թող ընտրութիւն անեն․ փառք աստծու՝ մէկ մէկու յետևից հրատարակւող բազմաթիւ հատորներով գրեանքը հաստատում են. թէ՝—Պօլսու մեր հայ եղբարց ընթերցասիրութեան տարակը, շատ մեծ է, կարող է շատ բան մարսել, շատ բան տանել․ Որքան էլ որ կամենային մեզ յուսահատեցնել խաւարասէրները, այնուամենայնիւ, հոգով, սրտով, գլխով և ուղեղով համոզուած եմ, որ ընդհանուր քաղաքակրթեալ ազգերի զարգացման կայծերը արդէն երևում են մեր կեանքի մէջ․ Դա միայն ժամանակի հարց է դառել, որ գիտութեան այդ կայծերից բոց առաջանայ․․․․ Մենք յուսով ենք, որ առաջին հրդեհը Պօլսոյ հայերը կը գցեն․․․․ (Նրանք հրդեհների սիրող են․․․)

Մի բանից միայն վախենում եմ, որ Ալէքսանդր Դիւմաի, և դրա նման հեղինակների քամիքը հանգցնեն գիտութեան այդ կայծերը․․․․ Էդպիսի գրեանքը որոնք տպվում են, դրանք ունեն միայն ճաշակի արժանաւորութիւն, իսկ հայութեան պահանջմունքները յագեցնել չեն կարող․․․․ Աֆիոնը խմելուց յետոյ, երբ մարդու ջղերը բոլորովին թուլանում է․․․, էդ հեղինակների գրեանքը պէտք գայ,—խօսք չը կայ (!!!) Pour passer le temps ահա գերազանց Դիւմաի հարիւրաւոր հեղինակութիւնների ամբողջ կրիտիկան․ թէև պէտք է խոստովանած, որ էդ գրքերում, ինչ ասես մէջը կայ. հրեշտակ, սատանայ դժոխք, կայծակ, արիւն և այլ էդպիսի բաներ․․․ Երբ որ բանը մարդուն է ընկել,—թող մուրանք բան չկայ․ Երբ որ պէտք է պանիր կտրենք, թող թանէ սպաս չունենք, որ գիտութեան քաղցածութիւնից մեռնող հայերիս սնունդ կարողանայ դառնալ․ իսկ pour passer le temps (ժամանակ անցկացնելու համար) իմ մեծապատիւ էֆէնդիք, կամ ձեր հռչակուած բաղանիքները գնացէք—հռչակուած մեղքերդ (եթէ ունէք միայն․․․) լուացելու համար. կամ Բօսֆօրի գեղեցկութեամբը սիրահարվեցէք,—մէկ մէկու ատելու փոխարէն. կամ ձեր հիւանդանոցի մուրինների թաղեցէք,—բան չունենալու պատճառաւ. և կամ եթէ էդքան բաները հերիք չէ, էլի Բ. Դռան, ամէն մի կարգադրութիւնը, ամէն մի վէզիրի ու ոստիկան փաշայի իմաստութիւնը գովեցէք. որից պարզ կերևայ (!!) թէ՝—Տաճկաստանը, աշխարհիս մէջ՝ ամենից զարգացած և քաղաքակրթեալ տէրութիւնն է․․․․

Չաքուճ․

Дозволено цензурою Тифлисъ, 28. февраля